

ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի և Գերմանիայի
Դաշնային Հանրապետության Հեսսեն երկրամասի Բերգշտրասսե շրջանի
ղեկավարի միջև համագործակցության մասին

ՀՀ Արարատի մարզպետը և ԳԴՀ Հեսսեն երկրամասի Բերգշտրասսե շրջանի
ղեկավարը այսուհետ՝ Կողմերը, ելնելով իրավահավասար և վստահելի
գործընկերության կառուցման և հարաբերությունների զարգացման մտադրությունից, հիմք
ընդունելով փոխըմբռնման և վստահության վրա հիմնված հայ-գերմանական
բարեկամական հարաբերությունները, հայտնում են իրենց ցանկությունը
համագործակցելու համատեղ ծրագրերի արդյունավետ իրականացման շուրջ:

1. Կողմերը հաստատում են իրենց ցանկությունը համագործակցելու սույն
Հուշագրի դրույթներին համապատասխան՝ գործելով իրենց լիազորությունների
շրջանակներում:

2. Կողմերը հաստատում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող
համատեղ ծրագրերի և հեռանկարային նախագծերի իրականացման,
կառավարման ոլորտում փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ նպատակ
ունենալով զարգացնել համագործակցությունը՝ գյուղատնտեսական,
բնապահպանական, բնական արգելոցների ստեղծման, մշակույթի և կրթության
բնագավառներում:

3. Կողմերը մտադիր են աջակցություն ցուցաբերելու երկու շրջանների այն
կազմակերպություններին և ձեռնարկություններին, որոնք աշխատանքներ են
իրականացնում արդյունաբերության, գյուղատնտեսության, բնապահպանության, բնական
արգելոցների ստեղծման, կրթության, մշակույթի ոլորտներում:

4. Կողմերը մտադիր կազմակերպել փոխայցեր, նպաստել շրջանների
համայնքների և տնտեսավարող սուբյեկտների միջև ուղիղ համագործակցության
զարգացմանը:

5. Կողմերը պատրաստակամ են իրենց լիազորությունների շրջանակներում
աջակցություն ցուցաբերելու մասնագետների, մանկավարժների, ուսանողների
փոխայցերի իրականացմանը, կազմակերպելու գործարար համաժողովներ,
ցուցահանդեսներ:

6. Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի վրա չի դնում ֆինանսական կամ այլ
պարտավորություններ:

Սույն Հուշագիրը ստորագրված է Արարատի մարզի Արտաշատ քաղաքում 2013 թվականի ապրիլի 3-ին երեք հավասարազոր օրինակով՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն:

ՀՀ Արարատի մարզպետ

ԷԴԻԿ ԲԱՐՍԵԳԻԱՆ




EDIK BARSEGHYAN

ԳԴՀ Հեսսենի երկրամասի

Բեգշտրասսե շրջանի ղեկավար

ՄԱԹԻԱՍ ՎԻԼԿԵՍ



MATTHIAS WILKES

MEMORANDUM OF UNDERSTANDING

on Cooperation

Between

**Governor of Ararat Marz of the Republic of Armenia
and
Head of Bergstrasse Region of Hessen Bundesland
of the Federal Republic of Germany**

Seeking for establishment and further development of equitable and trusty partnership, considering the Armenian-German friendly relations, based on mutual understanding and trust, the Governor of Ararat Marz of the Republic of Armenia and the Head of Bergstrasse Region of Hessen Bundesland of the Federal Republic of Germany (hereinafter referred as the Parties) express their intention to cooperate towards the effective implementation of the joint programs.


1. The Parties confirm their aspiration to cooperate according to the articles of this Memorandum, within the auspices of their authority.
2. The Parties confirm the necessity of the implementation of the mutually interesting joint programs and perspective projects, as well as exchange of experience in the fields of the administration, seeking to develop cooperation in the areas of agriculture, natural protection, creation of geoparks, culture and education.
3. The Parties intend to support to those organizations and enterprises of the two regions, which operate in the fields of industry, agriculture, natural protection, creation of geoparks, culture and education.
4. The Parties intend to organize bilateral visits, to promote the development of the direct cooperation between the communities of the regions and business entities.
5. The Parties are willing, within the frames of their authority, to provide necessary assistance to the organization of the mutual visits of the professional, teachers, students, as well as business forums, exhibitions.
6. The present Memorandum does not create any financial or other responsibilities for the Parties.

This Memorandum is signed on 3 April, 2013, in the city of Artashat of Ararat Marz, by three identical examples- Armenian, German and English.

**GOVERNOR OF MARZ ARARAT
OF THE REPUBLIC OF ARMENIA**


EDIK BARSEGHYAN

**HEAD OF BERGSTRASSE REGION
OF HESSEN BUNDESLAND OF
THE FEDERAL REPUBLIC OF GERMANY**


MATTHIAS WILKES